ՏԵՂԵԿԱՆՔ

««Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված Համաձայնագիրը» փոփոխող արձանագրության հաստատման նպատակահարմարության

Կարևորելով Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև առևտրի և տնտեսական կապերի զարգացումը և ելներով փոխադարձ շահերից՝ անհրաժեշտություն է առաջացել լրացում կատարել 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» Համաձայնագրում:

««Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված Համաձայնագիրը» փոփոխող արձանագրությունը թույլ է տալիս Համակցված շարժակազմով բեռների փոխադրում կատարելիս պայմանավորվող կողմի տարածքում կցորդի կամ կիսակցորդի փոփոխություն իրականացնել, որը հաշվառված է պայմանավորվող կողմերի տարածքներից մեկում: Վերջինս հեշտացնում և կարգավորում է Երկու պետությունների տարածքներով կամ այդ տարածքներով տարանցմամբ իրականացվող բեռների ավտոտրանսպորտային փոխադրումները:

Իրականացված փոփոխության նպատակը փոխադրումների ժամանակը և ծախսերը կրճատելն է, ինչի արդյունքում կբարձրանա փոխադրումների արդյունավետությունը: Փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները պայմանավորվող կողմի տարածքում, առանց սպասելու բեռնաթափմանը, կանջատեն կցորդը կամ կիսակցորդը և կցելով այլ կցորդ կամ կիսակցորդ կշարունակեն փոխադրումը:

Համաձայնագրում իրականացված լրացումը նպաստում է երկու երկրների միջև փոխադրումների զարգացմանը, դրանց կիրառվող ընթացակարգերի պարզեցմանը և տրանսպորտային ծախսերի նվազեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ տրանսպորտի, կապի տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը նպատակահարմար է գտնում ««Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված Համաձայնագիրը» փոփոխող արձանագրության հաստատումը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատար՝ Հ. ԱՐՇԱԿՅԱՆ